

***Քառասունքի Հոգեհանգիստ
Հոգելոյս Պատրիարքին՝ Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի՝
96-րդ Գահակալին Սրբոց Յակոբեանց Առաքելական Սուրբ
Աթոռոյս***

21 Նոյեմբեր, 2012ին լրացաւ հանգուցեալ Պատրիարք Սրբազան Հօր հոգելոյս Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի մահուան քառասունքը: Այս առթիւ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ 25 Նոյեմբեր, 2012ին: Օրուան Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Հոգեւոր պատգամը ներկաներուն բաժնեց Պատրիարքական Տեղապահ Գերաշնորհ Տ. Արիս Արք. Շիրվանեան: Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ Հոգելոյս Պատրիարքին՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Բ. Արք. Մանուկեանի Հոգեհանգստեան արարողութիւնը որմէ ետք միաբանական թափօրը ուղղուեցաւ դէպի Ս. Փրկչի գերեզմանատունը ուր կատարուեցաւ հանգուցեալ Պատրիարք Հօր գերեզմանի օրհնութիւնը: Արարողութեանց իրենց մասնակցութիւնը բերած էին Քոյր Եկեղեցիներու հեգեւոր պետեր, հիւպատոսներ, պաշտօնեաներ:

Ապա հոգեսուրճ հրամցուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ:

Հանգուցեալ Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հոգւոյ համար Հոգեհանգիստ կատարելու խնդրանքով Պատրիարքական Տեղապահ Գերաշնորհ Տ. Արիս Արք. Շիրվանեան նամակներ դրկած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Կ.Պոլսոյ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ Արք. Աթէշեանին:

Հոգեհանգիստ կատարելու հրահանգ տրուած էր նաեւ Երուսաղէմի, Եաֆայի, Հայֆայի, Ռամլէի եւ Յորդանանի մէջ գտնուող մեր Սրբատեղիներու տեսուչներուն եւ հոգեւոր հովիւներուն, որպէսզի անոնք եւս 24 Նոյեմբեր, 2012ին կատարէին քառասունքի հոգեհանգիստ մեր սիրեցեալ Պատրիարք Հօր հոգւոյ լուսաւորութեան համար: